## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com


# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

18 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 886

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ, ԲԵՐՔԱԲԵՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ, 11-020-0111-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.28930 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզ, Իջևան համայնք, Բերքաբեր բնակավայրի վարչական սահմաններում առանձնացվել է 0.28930հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 28.09.2005թ թիվ 1906-Ն որոշման և Տավուշի մարզի Բերքաբեր համայնքին փոխանցված հողերի ժամանակավոր սխեմայի, նշված հողամասը հանդիսանում է համայնքային սեփականության 11-020-0111-0001 ծածկագրով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամաս: Անհրաժեշտություն է առաջացել առանձնացված 0.28930հա մակերեսով հողամասը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 28.09.,2005թ թիվ 1906-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Տավուշի մարզի Իջևան համայնքի, Բերքաբեր բնակավայրի վարչական սահմաններում՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության նպատակային, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասից /ծածկագիր 11-020-0111-0001/ առանձնացնել 0.28930 հա մակերեսով մաս, համաձայն հաստատված հատակագծի:

2. Տավուշի մարզի Իջևան համայնքի, Բերքաբեր բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.28930հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ Իջևան համայնք, գյուղ Բերքաբեր, 11-րդ փողոց, թիվ 8 հողամաս:

3.Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԿԱՏԱՐՈՂ
Կ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

18 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 887

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ, Հ. ՂԱԼՈՒՄՅԱՆ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲ. ԹԻՎ 43 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՎՈՂ 0.0546ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՆ ԸՆԴԼԱՅՆՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Գյուլնարա Հայկի Մելիքսեթյանը, Իջևան համայնքի, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ43 հասցեում գտնվող և իրեն պատկանող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0546հա մակերեսով հողամասին /վկայական թիվ 11032025-11-0035, ծածկագիր 11-001-0047-0050/ ընդլայնման նպատակով տարածք հատկացնելու խնդրանքով /դիմում թիվ2803, 17.07.2025թ./: Նշված տարածքին կից, բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակությամբ՝ գոյություն ունի 0.05459 հա մակերեսով չկառուցապատված հողամաս, որի նկատմամբ գրանցված է Իջևան համայնքի սեփականության իրավունքը /վկայական թիվ 22042025-11-0062, ծածկագիր 11-001-0047-0136/, Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ29/1 հասցեով: Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ29/1 հասցեում գտնվող 0.05459 հա մակերեսով հողամասը չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՛՛ 60-րդ հոդվածով սահմանված հողերի շարքում, նախատեսված չէ այլ նպատակային կամ այլ գործառնական նշանակության համար, որպես առանձին միավոր հնարավոր չէ տրամադրել աճուրդային կարգով:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության ,,Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օգտագործման, կառուցման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին,, 12.04.2001թ. թիվ 286 որոշման 4-րդ գլխի, 20-րդ կետի, գ/ ենթակետի, 04.06.2020թ. թիվ 1023-Ն ,,Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին,, ՀՀ օրենքի, ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, թիվ 66-րդ հոդվածի թիվ 8 կետի դրույթներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ43 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Գյուլնարա Հայկի Մելիքսեթյանին պատկանող, բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0546հա մակերեսով հողամասին /վկայական թիվ 11032025-11-0035, ծածկագիր 11-001-0047-0050/ կից՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ29/1 հասցեում գտնվող 0.05459հա մակերեսով բնակավայրերի նպատակային բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /վկայական թիվ 22042025-11-0062, ծածկագիր 11-001-0047-0136/, ընդլայնման կարգով տրամադրել Գյուլնարա Հայկի Մելիքսեթյանին ուղղակի վաճառքով և հաշվի առնելով, որ ՀՀ կառավարության 04.06.2020թ. թիվ 1023-Ն որոշմամբ անշարժ գույքը գտնվում է ՀՀ տարածագնահատման 12-րդ գոտում, այն վաճառել 1քմ 2887.5 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 1576286 /մեկ միլիոն հինգ հարյուր յոթանասունվեց հազար երկու հարյուր ութսունվեց/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

2.Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ43 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Գյուլնարա Հայկի Մելիքսեթյանին պատկանող, բնակավայրերի բնակելի կառուցապատման 0.0546հա մակերեսով հողամասին /վկայական թիվ 11032025-11-0035, ծածկագիր 11-001-0047-0050/ կից՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ29/1 հասցեում

ավող 0.05459հա մակերեսով բնակավայրերի նպատակային բնակելի առուցապատման գործառնական նշանակության հողամաս /վկայական թիվ 22042025-11-0062, ծածկագիր 11-001-0047-0136/, ընդլայնված անշարժ գույքին տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Իջևան քաղաքի, Հ. Ղալումյան փողոցի, 2-րդ նրբ. թիվ43:

3.Քաղաքացի՝ Գյուլնարա Հայկի Մելիքսեթյանի հետ կնքել հողամասի առուվաճառքի պայմանագիր, որը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից բխող իրավունքները՝ պետական գրանցման: Մուծման անդորրագիրը սույն որոշման անբաժանելի մասն է:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 888

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0234-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.05 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

...ղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացվել է 0.05հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված հողամասը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0234-0001/:Անհրաժեշտություն է առաջացել առանձնացված 0.05հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Երևանյան փողոցում, առանձնացնել Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.05 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

2 Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացված 0.05 հա մակերեսով հողամասին /ծածկագիր ...001-0234-0001/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան Երևանյան փողոց, 8-րդ նրբանցք թիվ 16/2:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ԾԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 889

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0234-0001 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ, ԲՆԱԿԵԼԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.1 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացվել է 0.1հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնքի Իջևան քաղաքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-6 համակցված պլանավորման փաստաթղթերի, նշված հողամասը հանդիսանում է Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-001-0234-0001/:Անհրաժեշտություն է առաջացել առանձնացված 0.1հա մակերեսով հողամասին տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Երևանյան փողոցում, առանձնացնել Հայաստանի Հանրապետության սեփականության, բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.1 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

2 Իջևան համայնքի Իջևան քաղաքի Երևանյան փողոցում առանձնացված 0.1 հա մակերեսով հողամասին /ծածկագիր 001-0234-0001/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, քաղաք Իջևան Երևանյան փողոց, 8-րդ նրբանցք թիվ 16/3:

3.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 890

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄԵՀՐԱԲՅԱՆ ՓՈՂՈՑՈՒՄ, 11-001-0259-0005 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՑ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՈՎ 0.00655 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Քաղաքաշինական նպատակներով Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մեհրաբյան փողոցում առանձնացվել է 0.00655 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.10.2005թ. թիվ 2417-Ն որոշման, նշված 0.00655 հա մակերեսով հողամասը հանդիսանում է Իջևան համայնքին փոխանցված բնակավայրերի այլ հողեր հողամաս /ծածկագիր 11-001-0259-0005/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.00655 հա մակերեսով հողամասի գործառնական նշաբակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.11-001-0259-0005 ծածկագրով 0.00655 հա մակերեսով հողամասը, բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակությունից փոխադրել բնակավայրերի հասարակական կատուցապատման գործառնական նշանակության հողերի շարք:

2.Իջևան համայնքի, Իջևան քաղաքի Մեհրաբյան փողոցում առանձնացնել բնակավայրերի նպատակային, հասարակական կատուցապատման գործառնական նշանակության 0.00655 հա հողամաս՝ համաձայն հաստատված հատակագծի:

3.Իջևան համայնքի Իջևան քաղաքի Մեհրաբյան փողոցում առանձնացված 0.00655 հա մակերեսով հողամասին / ծածկագիր 11-001-0259-0005/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Մեհրաբյան փողոց, թիվ 53/2 հողամաս:

4.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com


## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 891

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԱՆՁԱՔԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ, ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ, 11-021-0066-0009 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.02267 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍ ԱՌԱՆՁՆԱՑՆԵԼՈՒ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզի Իջևան համայնք, Գանձաքար գյուղի վարչական սահմաններում բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակով առանձնացվել է 0.02267 հա մակերեսով հողամաս: Համաձայն ՀՀ կառավարության 06.06.2006թ. թիվ 1088-Ն որոշման, նշված 0.02267հա մակերեսով հողամասը հանդիսանում է բնակավայրերի այլ հողեր գործառնական նշանակության հողամաս /ծածկագիր 11-021-0066-0009/: Անհրաժեշտություն է առաջացել փոխել առանձնացված 0.02267 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը և տալ հասցեավորում:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ <<Հողային Օրենսգրքի>> 53-րդ հոդվածի դրույթներով, ՀՀ կառավարության 20,04,2006թ, թիվ 727-Ն որոշման և ՀՀ կառավարության 29,12,2005թ, թիվ 2387-Ն որոշման պահանջներով,

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան համայնք, Գանձաքար գյուղի վարչական սահմաններում առանձնացված 0.02267հա մակերեսով հողամասի /ծածկագիր 11-021-0066-0009/ գործառնական նշանակությունը բնակավայրերի այլ հողատեսքից փոխադրել բնակավայրերի բնակելի կառուցապատման հողերի շարք:

2.Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար գյուղի վարչական սահմաններում՝ բնակավայրերի բնակելի կառուցապատման նպատակով առանձնացնել 0.02267 հա մակերեսով մաս /ծածկագիր 11-021-0066-0009/, համաձայն հաստատված հատակագծի:

3.Տավուշի մարզի Իջևան համայնքի Գանձաքար գյուղի վարչական սահմաններում գտնվող 0.02267 հա հողամասին տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Գանձաքար գյուղ, 25-րդ փողոց, 1-ին նրբ. թիվ 4/1 հողամաս:

4.Սույն որոշումն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 892

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔ, ՍԵՎՔԱՐԵՑԻ ՍԱՔՈՅԻ ՓՈՂՈՑԻ ԹԻՎ 4/13 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 27.7 ՔՄ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԵՎ ՆՐԱ ՎՐԱ ՆԱՐԻՆԵ ՍԵՐՈԺԻ ԽՈՋՈՒՄՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ 27.7ՔՄ ԱՐՏԱՔԻՆ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Սևքարեցի Սաքոյի փողոց, թիվ4/13 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 27.7քմ մակերեսով հողամասի վրա քաղաքացի՝ Նարինե Սերոժի Խոջումյանի կողմից ինքնակամ կերպով կառուցված 27.7քմ արտաքին մակերեսով ավտոտնակի շինությունը, որի ներքին մակերեսը կազմում է 24.8քմ՝ ճանաչվել է օրինական համայնքային սեփականություն /վկայական թիվ27022025-11-0061/: Անհրաժեշտություն է առաջացել օրինական համայնքային սեփականություն հանդիսացող 27.7քմ արտաքին մակերեսով ինքնակամ ավտոտնակի շինությունն, իր զբաղեցրած 27.7քմ մակերես հողամասով վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի՝ Նարինե Սերոժի Խոջումյանին: Ավտոտնակի շինության զբաղեցրած 27. 7քմ մակերեսով հողամասը և 27.7քմ մակերեսով ավտոտնակի շինությունը չեն խոչնդոտում այլ հողատարածքների նպատակային կամ գործառնական նշանակությանը, չեն դասվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՞ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի շարքին, չեն գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն սահմանափակում այլ անձանց իրավունքները, չեն առաջացնում սերվիտուտ:

Հաշվի առնելով վերոնշյալը և քաղաքաշինական խորհրդի դրական եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 4-րդ հոդվածի, թիվ 33.1 կետի բ/ ենթակետի, թիվ 33.2 կետի և թիվ 35 կետի բ/ ենթակետի, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ կետի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վաճառել կառույցն իրականացրած քաղաքացի Նարինե Սերոժի Խոջումյանին /18.07.2025թ., դիմում թիվ2820/ գնման նախապատվության իրավունքով /ուղղակի վաճառք/, Տավուշի մարզ, Իջևան համայնք, քաղաք Իջևան, Սևքարեցի Սաքոյի փողոց, թիվ4/13 հասցեում գտնվող 27.7 քմ մակերեսով հողամասը՝ 1քմ 4441.8 ՀՀ դրամ կադաստրային արժեքով 123038 /մեկ հարյուր քսաներեք հազար երեսունութ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով, իսկ 27.7 քմ արտաքին մակերեսով ավտոտնակը՝ 1քմ 1969 ՀՀ դրամ կադաստրային արժեքով՝ 54541/հիսունչորս հազար հինգ հարյուր քառասունմեկ/ ՀՀ դրամ ընդհանուր արժեքով:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 893

## ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԿՈՂՄԻՑ 27.05.2019Թ. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԹԻՎ 11 ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ, 03.07.2019Թ. ԹԻՎ 11 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել Տավուշի մարզի Իջևան համայնքի ղեկավարի կողմից 27.05.2019թ. տրամադրված թիվ11 նախագծման թույլտվության, 03.07.2019թ. թիվ11 շինարարության թույլտվության և հաստատված աշխատանքային նախագծի մեջ կատարել փոփոխություն, քանի որ կառուցապատվող հողամասում կատարվել է սեփականատերերի փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի և ՀՀ կառավարության 19.03.2015թ N596-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Տավուշի մարզի Իջևան համայնքի ղեկավարի կողմից 27.05.2019թ. տրամադրված թիվ11 նախագծման թույլտվության, 03.07.2019թ. թիվ11 շինարարության թույլտվության մեջ, կառուցապատող ,,Կարեն Ալեքսանի Մելիքսեթյանի, Մանե Գրիգորի Մելիքսեթյանի,, փոխարեն կարդալ՝ ,,Յոլակ Արկադիի Դավթյան, Արևիկ Արմենի Չիբուխչյան,,:

2.Հաստատված աշխատանքային նախագծի մեջ, կառուցապատող ,,Կարեն Մելիքսեթյանի,, փոխարեն կարդալ՝ ,,Յոլակ Արկադիի Դավթյան, Արևիկ Արմենի Չիբուխչյան,,:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 894

### ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԱՅԳԵՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 0.079 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 11-009-0088-0024 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻՆ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Լիլիկ Սուրենի Շահնազարյանը, Տավուշի մարզ Իջևան համայնք Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող, սեփականության իրավունքով իրեն պատկանող 0.079հա մակերեսով հողամասին հասցեավորում տալու խնդրանքով / ծածկագիր 11-009-0088-0024, վկայական թիվ 26062025-11-0025/:

Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղի վարչական սահմաններում գտնվող և սեփականության իրավունքով քաղաքացի Լիլիկ Սուրենի Շահնազարյանին պատկանող 0.079հա մակերեսով հողամասին /ծածկագիր 11-009-0088-0024, վկայական թիվ 26062025-11-0025/ տալ հետևյալ հասցեավորումը՝ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Այգեհովիտ գյուղ, 13-րդ փողոց, 9 հողամաս:

2. Սույն որոշումն ուժի մեջ է ստորագրման պահից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՃԱՂԱՐՅԱՆ**

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 895

## ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ, ՆՐԱ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ, ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀԱՅՏԻ ԵՎ ՆԱԽՆԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԱՂՅՈՒՍԱԿԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետը, Իջևան համայնքում մասնակցային բյուջետավորման գործընթացի կազմակերպման և համակարգման նպատակով՝

1.Ստեղծել Իջևան համայնքում 2025 թվականին մասնակցային բյուջետավորման գործընթացի կառավարման հանձնաժողով՝ համաձայն 1 հավելվածի:

2.Հանձնաժողովի նախագահին՝

1)կազմել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5-օրյա ժամկետում համայնքի ղեկավարի հաստատմանը ներկայացնել համայնքում 2025 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի իրականացման ժամանակացույցը:

2)հաստատված ժամանակացույցին համապատասխան կազմել և համայնքի ղեկավարին ներկայացնել մասնակցային բյուջետավորման գործընթացի յուրաքանչյուր փուլի ավարտի վերաբերյալ ընթացիկ և տարեկան ամփոփ հաշվետվություններ:

3.Սահմանել մասնակցային բյուջետավորման առաջարկների ներկայացման հայտի ձևաթուղթը՝ համաձայն 2 հավելվածի:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 897

## 09.01.2025թ. ԹԻՎ 20 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 09.01.2025թ. համայնքի ղեկավար թիվ 20 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան համայնքի ղեկավարի 09.01.2025թ. թիվ 20 որոշումը կարդալ.

,,ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՒՍԱՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՎՈՂ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՍԻԼԲԵԿԻ ՍԱՐՀԱՏՅԱՆԻՆ, ՄԱՆՈՒՇԱԿ ՎԱՌԼԱՄԻ ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ և ՄԱՆՎԵԼ ԳԱԳԻԿԻ ՍԱՐՀԱՏՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ 0.27302ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի ղեկավարին են դիմել Իջևան համայնքի Լուսահովիտ բնակավայրի բնակիչներ Գագիկ Ասիլբեկի Սարիատյանը՝ ծնված 06.01.1967թ., Մանվել Գագիկի Սարիատյանը՝ ծնված 1990թ., Մանուշակ Վառլամի Առուստամյանը՝ ծնված 1970թ., որ ըստ Տավուշի մարզի Լուսահովիտ բնակավայրի հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 09.05.1991թ. թիվ 2 որոշնամ ձեռք են բերել 0.08հա մակերեսով բնակավայրերի բնակելի կառուցապատման հողամաս, չափագրումից պարզվել է, որ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 0.27302հա, ուստի դիմել է օրինական 0.08հա մակերեսով և սահմանազատված, չկառուցապատված 0.19302հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերի վերականգնման խնդրանքով /ծածկագիր11-033-0001-0007/: Նշված հողամասը համաձայն Տավուշ 2 համակցված տարածական պլանավորման փաստաթղթերի, հանդիսանում է Լուսահովիտ բնակավայրին փոխանցված բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի մի մաս /ծածկագիր 11-033-0001-0007/: Հողամասում առկա է 2010-2012-2015թթ. ինքնակամ կառուցված 255.35քմ արտաքին մակերեսով բնակելի տուն և օժանդակ շինություններ:

0.27302հա մակերեսով հողամասի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, չի գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի՞ 60-րդ հոդվածով սահմանված հողամասի վրա, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ: Հաշվի առնելով վերոնշյալը և ղեկավարվելով ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 64-րդ հոդվածի, 8-րդ կետի, 1-ին ենթակետի, 16-րդ կետերի պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1.Վերականգնել Գագիկ Ասիլբեկի Սարիատյանին, Մանվել Գագիկի Սարիատյանին, Մանուշակ Վառլամի Առուստամյանին սեփականության իրավունքով պատկանող, Իջևան համայնքի Լուսահովիտ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.27302հա մակերեսով հողամասի հողհատկացման հիմքերը, ըստ հաստատված հատակագծի /ծածկագիր11-033-0001-0007/:

2.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման:,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ԾԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 898

## 09.07.2025թ. ԹԻՎ 859 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անհրաժեշտություն է առաջացել 09.07.2025թ. համայնքի ղեկավար թիվ 859 որոշման մեջ կատարել փոփոխություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 8-րդ գլխի, թիվ 33 և թիվ 34 հոդվածների դրույթներով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1.Իջևան համայնքի ղեկավարի 09.07.2025թ. թիվ 859 որոշումը կարդալ.

,,ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ, ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԽԱՇԹԱՌԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՏՆԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՓԱՍՏԱՑԻ ՏԻՐԱՊԵՏՎՈՂ 0.28192ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ /ԾԱԾԿԱԳԻՐ 11-035-0112-0008/ ՀՈՂԱՄԱՍԻ, ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԵՎ ՀԱՍՑԵԱՎՈՐՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համայնքի ղեկավարին է դիմել քաղաքացի Վարդանուշ Սարգսի Արամյանը, ծնված՝ 28.06.1954թ., որ Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրով ձեռք է բերել բնակելի տուն՝ իր հողամասով: Բնակելի տան չափագրումից պարզվել է, որ հողամասի /ծածկագիր 11-035-0112-0006/, փաստացի մակերեսը կազմում է 0.28192հա, որի վրա առկա է 1990թ. կառուցված 163,6քմ մակերեսով բնակելի տուն: Ուստի դիմել է փաստացի 0.28192հա, հողամասի և 163.6քմ մակերեսով բնակելի տան իրավական կարգավիճակի որոշման խնդրանքով /ծածկագիր 11-035-0112-0006/:Հաշվի առնելով այն հանգամանքը, որ 0.28192հա մակերեսով հողամասը և 163.6քմ ներքին մակերեսով բնակելի տունը, կառուցված չեն և չեն գտնվում ՀՀ ,,Հողային օրենսգրքի,, 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի, այդ թվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում, չեն հակասում քաղաքաշինական նորմերին, չեն առաջացնում սերվիտուտ:

Ղեկավարվելով 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշման և ՀՀ կառավարության 912-Ն որոշման պահանջներով.

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Վերականգնել քաղաքացի Վարդանուշ Սարգսի Արամյանի, սեփականության իրավունքը Տավուշի մարզ, Իջևան համայնք, Խաշթառակ բնակավայրի վարչական սահմաններում գտնվող 0.28192հա մակերեսով հողամասի և 163.6քմ մակերեսով բնակելի տան նկատմամբ /ծածկագիր 11-035-0112-0006/ և օրենքի ուժով համարել քաղաքացու սեփականությունը:

2. Քաղաքացի Վարդանուշ Սարգսի Արամյանին, պատկանող 0.28192հա մակերես հողամասով /ծածկագիր 11-035-0112-0006/ բնակելի տանը տալ հետևյալ հասցեավորումը. Տավուշի մարզ, Իջևան համայնք, գյուղ Խաշթառակ 6-րդ փողոց, 12 կիսակառույց բնակելի տուն:

3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ;,,

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.
Ք. ԻՋԵՎԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Իջևանի համայնք
ՀՀ, Տավուշի մարզ, ք. Իջևան, 060800094 ijevanmunicipality@gmail.com

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025թվականի N 899

### ԻՋԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՅԳԵՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 31 ՓՈՂՈՑԻ 10/1 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ՄԱՐՏԻԿԻ ՇԱՀԻՆՅԱՆԻՆ ՀԱՅԿ ԳԱԳԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ /ԾՆՎԱԾ՝ 18.06.2010թ./ ԵՎ ՄԱՐՏԻՆ ԳԱԳԻԿԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ/ԾՆՎԱԾ՝20.07.2011թ./ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Իջևան համայնքի Այգեհովիտ բնակավայրի 31 փողոցի 10/1 հասցեի բնակիչ Գագիկ Մարտիկի Շահինյանը դիմել է համայնքի խնամակալության և հոգաբարձության մարմնին՝ իր հետ համատեղ բնակվող, իր կենսաբանական որդիներ Հայկ Ղուկասյանի/ծնված՝18.6.2010թ./ և Մարտին Ղուկասյանի /ծնված՝20.07.2011թ./ նկատմամբ հոգաբարձու նշանակվելու խնդրանքով:

Դիմումատուն տեղեկացրել է, որ երեխաների կենսաբանական մոր հետ համատեղ բնակվել են 2010 թվականից, ունեցել են 2 որդի, վարել համատեղ կենցաղ: Համայնքի ԽՀՀ անդամների կողմից իրականացվել է երեխաների կյանքի հետազոտություն:Դիմումատուն տեղեկացրել է, իսկ համագյուղացիները, բարեկամները հաստատել, որ Հայկ Ղուկասյանի/ծնված՝18.6.2010թ./ և Մարտին Ղուկասյանի /ծնված՝20.07.2011թ./ կենսաբանական մայրը՝ Անի Կոլյայի Ղուկասյանը սույն թվականի մայիսի կեսից բացակայում է համայնքից, որոշ տեղեկությունների համաձայն նաև հանրապետությունից:Փաստացի Հայկ Ղուկասյանը/ծնված՝18.6.2010թ./ և Մարտին Ղուկասյան/ծնված՝20.07.2011թ./, որոնք միայնակ մոր երեխաներ են, մնացել են առանց օրինական ներկայացուցչի:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 34,37 հոդվածների դրույթներից,ՀՀ ընտանեկան օրենսգրքի 135 հոդվածի դրույթներից, ՀՀ կառավարության 02 հունիսի 2016 թ.թիվ 631-Ն որոշմամբ հաստատված խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրությամբ և հիմք ընդունելով խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 06.06.2025թվ. նիստի դրական եզրակացությունը.

## ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. Գագիկ Մարտիկի Շահինյանին/անձնագիր՝AT0412080, տրված՝09.03.2020թ.-038/ նշանակել հոգաբարձու Հայկ Գագիկի Ղուկասյանի և Մարտին Գագիկի Ղուկասյանի նկատմամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

21 ՀՈՒԼԻՍԻ 2025 թ.